


ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ

Posted on June 15, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Հանդիպում՝ Լրագրող Ժիրայր Թիւթիւնճեանի Հետ

Հրաչ Սեփեթճեան, «Նոր Օր», Լոս Անճելըս, 15 Յունիս 2013



Ժիրայր Թիւթիւնճեան խմբագիրն է Keghart.com կայքի անգլերէն բաժնին: Ան կ'ապրի Թորոնթօ, Քանատա եւ երկար տարիներ եղած է լրագրող ու խմբագիր անգլիատառ մամուլէն ներս: Լոս Անճելըս կատարած իր այցելութենէն օգտուելով, ՌԱԿ Հայ Իրաւանց Խորհուրդին հրաւերով, Շաբաթ, Յունիս 15-ի առաւօտեան, տեղի ունեցաւ հանդիպում մը յարգելի հիւրին հետ: Ներկայ էին մտաւորականներ, ազգային քաղաքական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Բարի գալուստի խօսքը արտասանեց ՌԱԿ Հայ Իրաւանց Խորհուրդի ատենապետ՝ Տոքթ. Ռաֆֆի Պալեան: Ապա «Նոր Օր»ի խմբագրական կազմի անդամ, Keghart.com կայքի հայերէն բաժնի պատասխանատու Դոկտ. Մինաս Գոճայեան ներկայացուց Ժիրայր Թիւթիւնճեանի կենսագրական գիծերը:

Հանդիպում՝ Լրագրող Ժիրայր Թիւթիւնճեանի Հետ

Հրաչ Սեփեթճեան, «Նոր Օր», Լոս Անճելըս, 15 Յունիս 2013



Ժիրայր Թիւթիւնճեան խմբագիրն է Keghart.com կայքի անգլերէն բաժնին: Ան կ'ապրի Թորոնթօ, Քանատա եւ երկար տարիներ եղած է լրագրող ու խմբագիր անգլիատառ մամուլէն ներս: Լոս Անճելըս կատարած իր այցելութենէն օգտուելով, ՌԱԿ Հայ Իրաւանց Խորհուրդին հրաւերով, Շաբաթ, Յունիս 15-ի առաւօտեան, տեղի ունեցաւ հանդիպում մը յարգելի հիւրին հետ: Ներկայ էին մտաւորականներ, ազգային քաղաքական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Բարի գալուստի խօսքը արտասանեց ՌԱԿ Հայ Իրաւանց Խորհուրդի ատենապետ՝ Տոքթ. Ռաֆֆի Պալեան: Ապա «Նոր Օր»ի խմբագրական կազմի անդամ, Keghart.com կայքի հայերէն բաժնի պատասխանատու Դոկտ. Մինաս Գոճայեան ներկայացուց Ժիրայր Թիւթիւնճեանի կենսագրական գիծերը:

Թիւթիւնճեան ծնունդով Երուսաղէմէն է, ապա անցած է Լիբանան եւ հոնկէ՝ Քանատա: Գոճայեան նշեց, որ անոր գրութիւնները ընդհանրապէս երկարապատում յօդուածներ չեն, այլ՝ կարճ ու ամփոփ, տեղը տեղին: Ներկայիս, ան նախագահն է MultiMedia Inc.-ին:

Թիւթիւնճեան շնորհակալութիւն յայտնեց նման առիթ մը ստեղծելուն համար եւ ուղղակի անցաւ իր նիւթին. Հայաստանը, Սփիւռքը եւ Հայը՝ այսօր: Ան փոխանցեց իր անձնական կարծիքները, որոնք ընդհանրապէս բոլորս յուզող խնդիրներ են, երբեմն աւելի համարձակ գտնուելով, մատը դրաւ ուղղակի վերքին վրայ, մեր ցաւերուն վրայ: Դեղամիջոց. այո՛, ունէր:

Ահաւասիկ, անոր ելոյթին սղագրութիւնը:

Այսօրուան Հայաստանի խնդիրները.

- Արտագաղթը հասած է մեծ չափերու:

- Երկիրը խուլիկաններու ձեռքն է:
- Ռաֆֆի Յովհաննեսեանէն յուսախաբ է ժողովուրդը, ան պաշարուած է գայլերով: Կարիքը կայ գորաւոր ըմդդիմադիր ղեկավարի:
- Խօսքի ազատութիւնը հարցականի տակ է, կայ ընդդիմադիր մամուլ, կայ ընդդիմութիւն, սակայն ընկերային հարցերը պատճառ կը դառնան, որ ժողովուրդը վազէ օրուան հացին ետեւէն:
- Ապրուստի համար ժողովուրդը իր մասնագիտութենէն դուրս այլ գործերով կը զբաղի:
- Հայաստան այսօր ունի 600-650 հանք, որոնք օտարներու ձեռքն են եւ կամ իշխանաւորներու հսկողութեան տակ:

Ի՞նչ ընել: Դեղամիջոցներ.



- Արեւմտահայերու Ազգային Համագումարը (ԱԱՀ-NCWA), «Սարդարապատ» շարժումը, «Նախախորհրդարան»ը (Preparliament.org), ինչպէս նաեւ «Հայկական Վերածնունդ» (Armenian Renaissance) կազմակերպութիւնները արդէն իսկ ձեւաւորուող կառոյցներ են Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, որոնց շուրջ որակ կազմող ազգայիններու թիւ մը գոյութիւն ունի: Այս կառոյցները սփիւռքի մէջ կը գործեն դասական կուսակցութիւններէն անկախ: Անոնք ծնունդն են ներկայի հրամայականներուն:
- Սփիւռքի մէջ գործող "Armenian Renaissance"-ը կ'ուզէ խաղաղ կերպերով երկիրը բարեփոխել:
- Արեւմտահայերու Ազգային Համագումար կազմակերպութեան աշխատանքներէն մին է՝ Թուրքիան Միջազգային Դատարան տանիլ: Կազմակերպութիւնը ունի շուրջ 250 անդամ. ներկայիս աշխատանք կը տարուի բացուելու հանրութեան եւ անդամարշաւով բազմապատկուելու:
- Հայաստանի այսօրուան իշխանաւորները կը փորձեն միաժամանակ թէ՛ դաշնակից մնալ ռուսին եւ թէ՛ պահել Եւրոպական Միութեան եւ ՆԱԹՕ-ի հետ սերտ կապեր: Ծանր է Հայաստանի իրավիճակը՝ ռուսական լծակին տակ ըլլալ եւ Նոյն ատեն Արեւմուտքին մօտենալ:
- Ռուսը կ'ուզէ որ Հայաստան կախեալ մնայ իրմէ:

Սփիւռքը.

- Սփիւռքի վիճակը ցաւալի է:
- Իրականութեան մէջ սփիւռքահայութեան տասը տոկոսը միայն հայ կեանքէն ներս գործօն է փաստօրէն:

- Պետք է հայրենի ժողովուրդը հողին վրայ պահել. այդպես սփիւռքն ա՛լ աւելի զօրաւոր կ'ըլլայ:
- High-tech industry, ուղեղը ունինք, պետք է աշխատանք ստեղծել, որպէսզի մնանք հողին վրայ:
- Ձախ եւ աջ գաղափարախօսութիւնները պետք է մոռնանք եւ կեդրոնանանք սփիւռքահայութիւնը փրկելու ճուլումէ:
- Մենք մեր ձեռքով կը քանդենք մեր ներկան, օտար ամուսնութիւններով, շատ արագ լեզուն կորսնցնելով, հայու ինքնութիւնը կորսնցնելով:
- Ղեկավարութիւն է պետք, կեդրոնացած ծրագիր. օրինակ, ազգային տուրքի գաղափարով ճամբայ ելլել. ամէն մէկս պետք է զգանք մեր դերը: Ժամն է զգաստութեան:

Վերջաւորութեան հարցում-պատասխանով ներկաները կիսեցին իրենց մտահոգութիւնները. հայութեան բազմաշերտ երկուածութիւնները կը մնան Հայը կոտորակող թիւ մէկ խնդիրը: Մենք է որ մեր ձեռքով կ'ընենք այդ բոլորը, ըսաւ ան, եւ ներկաները փնտռեցին այն «շաղախը», որ պիտի համախմբէ եւ ուժական դարձնէ մեր ներկայ իրականութիւնը: Անիկա նոյնինքն Հայն է:

